Գ. Ներքին Շորժա

30.12.2011թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հ.Հ. Գեղարքունիքի մարզի Ներքին Շորժա համայնքի ղեկավար Է. Մինասյանի 2010-2011թթ. կատարած աշխատանքների մասին: Իմ կողմից ներկայացվող հաշվետվությունը ընդգրկում է վերջին երկու տարում 2010-2011թթ. Ներքին Շորժա համայնքում կատարած աշխատանքների և բյուջեյի կատարողականի մասին: Ներքին Շորժա համայնքում կա 35 տնտեսություն, ապրում են 131 բնակիչ:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման և Հ.Հ. Համայնքային ծառայության մասին>> օրենքներով համայնքի Տիմ մարմինները իրենց գործողությունը հիմնականում նպատակաուղղել են համայնքի բնակչության հոգսերի և խնդիրների լուծման, համայնքում առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների բարելավման հարցերին: Միաժամանակ իրազեկվում է, որ համայնքում առկա են մի շարք հիմնախնդիրներ կապված խմելու ջրի ,ջրագծի համակարգի վերանորոգմանը: Նշված հարցի լուծումը կապված է զգալի ֆինանսական և նյութական հատկացումների հետ, որի հնարավորությունը գյուղապետարանը չունի: Այդ խնդրի լուծումը ընդգրկված է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրում և ներկայացվել են համապատասխան վերադաս մարմիներին: Խիստ մտահոգիչ է համայնքի բնակչության զբաղվածության հարցը, մեծամասնությունը զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ :

Ներքին Շորժայի գյուղապետարանի աշխատակազմի ապարատը բաղկացած է չորս հոգուց, համայնքի ավագանին բաղկացած է չորս անդամից:Համայնքի վարչական տարածքը 2308 հա է , որից 695հա վարելահող, 163.81հա խոտհարք, 4.4հա տնամերձ, 994.80հա արոտավայր, որից վարձակալությամբ տրվածէ 406հա վարելահող, 50հա խոտհարք:

Ըստ տարիների համայնքի բյուջեն ունի հետևյալ տեսքը՝

2010թ.պլան- 7070.70հազ. դրամ կատարվել է- 100% -ով

2011թ.պլան -7070.70հազ. դրամ կատարվել է-100% -ով

հողի հարկ ՝16.90հազ.դրամի դիմաց գանձվել է 22.55հազ.դրամ, կատարվել է 133 % -ով

գույքահարկ՝ 21.50հազ.դրամի դիմաց գանձվել է 34.00հազ. դրամ,կատարվել է 158 %- ով

հողի վարձավճար՝2602.30հազ.դրամի դիմաց գանձվել է 2602.30հազ. դրամ, կատարվել է 100%-ով

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի բյուջեյի մուտքերը ծախսվել են մինչև նախորդ տարիների և ընթացիկ տարվա աշխատավարձի և սոց.վճարների հատկացման վրա:

Որպես համայնքի ղեկավար հավաստիացնում եմ, որ անհրաժեշտ բոլոր միջոցները կձեռնարկվեն համայնքի առջև դրված սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համայնքի բյուջեյի եկամտային հնարարորինս բարձր տոկոսների կատարման ուղղությամբ:

Ներքին Շորժա համայնքի ղեկավար՝ Է.Մինասյան

Մարզպետարանի ներկայացուցիչ՝ Ա.Հարությունյան